

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանի տարածքային զարգացմանը» ֆինանսավորման համաձայնագրի վերաբերյալ

Դրամաշնորհային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև «Աջակցություն Հայաստանի տարածքային զարգացմանը» ֆինանսավորման համաձայնագիր

Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝ 11.12.2014թ.

Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 31.12.2014թ.

Համաձայնագրով նախատեսված գումարը՝ 11,750,000.0 եվրո, որից 10 մլն եվրոն ԵՄ-ի ֆինանսավորումից, 1,750,000.0 եվրոն ՀՀ կառավարության համաֆինանսավորումից:

Համաձայնագրի փակման ամսաթիվը՝ համաձայնագրի կատարման ժամկետը սկսվում է ուժի մեջ մտնելու ամսաթվից և ավարտվում է այդ ամսաթվից 72 ամիս հետո:

Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝ Ծրագրի իրականացման փուլի տևողությունը սահմանվում է 48 ամիս: Ծրագրի ավարտական փուլի տևողությունը սահմանվում է 24 ամիս:

Ըստ համաձայնագրի տրամադրված դրամաշնորհային ծրագրերի անվանումները՝ ԵՄ ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվում են հետևյալ տարածքային զարգացման պիլոտային 8 ծրագրերը՝

- Ինտեգրված աջակցություն Հայաստանի գյուղական լեռնային շրջանների կայուն տնտեսական զարգացմանը, «Շեն» ՀԿ
ԵՄ ֆինանսավորում՝ 1,340,995.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 225,000.0 եվրո,
- Շիրակի մարզում տեխնոլոգիական զարգացման խթանում, «Ինովացիոն կենտրոն» Հիմնադրամ
ԵՄ ֆինանսավորում՝ 750,000.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 127,500.0 եվրո,
- Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը, որպես հիմնական նախապայման տեղական / տարածաշրջանային տնտեսական զարգացման համար, «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»
ԵՄ ֆինանսավորում՝ 1,604,808.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 280,842.5 եվրո,
- Բնապահպանական մարտահրավերների վերաժումը հնարավորությունների. պլաստիկ թափոններից շինարարական նյութերի ստացում, Կապանի համայնքապետարան

- ԵՄ ֆինանսավորում՝ 749,963.55 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 127,494.52 եվրո,
- Դիվիզանի և հարակից համայնքների զարգացման նախաձեռնություն, «ԻԴԵԱ» Հիմնադրամ,
ԵՄ ֆինանսավորում՝ 1,194,890.0 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 195,000.0 եվրո,
 - ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով, Ֆլորենցիայի համալսարանի Իտալական ուսումնահետազոտական կազմակերպություն,
ԵՄ ֆինանսավորում՝ 2,084,951.71 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին քան 375,000.0 եվրո,
 - Տավուշի մարզի ինտեգրված և համաչափ տնտեսական զարգացում, «Համայնքային զարգացման կենտրոն» ՀԿ
ԵՄ ֆինանսավորում՝ 1,626,333.33 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին, քան 243,950 եվրո
 - Ամասիայում բրդյա թելերի և կտորի արտադրություն, Ամասիայի համայնքապետարան, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ
ԵՄ ֆինանսավորում՝ 549 819 00 եվրո, ՀՀ կառավարության համաֆինանսավորում՝ ոչ ավելին, քան 87,970.0 եվրո:

Ծրագրի նպատակը՝ Դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակը մի շարք պիլոտային ծրագրերի ֆինանսավորումն է, գործողությունների իրականացումը, որը կաջակցի և կզարգացնի տարածքային/տեղական սոցիալ-տնտեսական պայմանները՝ անդրադառնալով երկու կարևոր խնդրի. Մարզային զարգացման ծրագիրը և ՏԱ թիմի կողմից իրականացրած կարիքների գնահատումը: Դրամաշնորհային ծրագրի նպատակներում հաշվի կառնվեն նաև ազգային մակարդակով հաստատված ոլորտային ռազմավարությունները:

Ակնկալվող արդյունքները՝ նախատեսվում է ստեղծել 500-ից ավելի աշխատատեղ, ինչպես նաև բարձրացնել 300-ից ավելի ձեռնարկությունների մրցունակությունը:

Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 01.11.2019թ. դրությամբ՝
ԵՄ ֆինանսավորման մասով՝ 5,317,515.7 եվրո կամ 2,903,445,324.3 ՀՀ դրամ,
ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասով՝ 889,206.9 եվրո կամ 485,742,800.9 ՀՀ դրամ:

Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝ Ծրագրերի իրականացման արդյունքում արդեն իսկ ստեղծվել են շուրջ 180 նոր աշխատատեղեր և բարձրացվել է ավելին քան 160 ձեռնարկությունների մրցունակությունը: Սահմանված կարգով ընտրված կազմակերպությունների կողմից ներկայացվում են հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ: